ՆԸԽԱՂԱՅ, տես ՆԱՖԱՂԱՅ:

ՆՈՐՇԸՊՈՎ, տես ՆԸՐՇԸՊՈՎ:

ՆՈՒԿԻ, մ. հ., ունկի, once:

## Շ.

ՇԱԼԱՅ, ՇԱԼԼԱՅ, տես ԻՇԱԼԱՅ:

ՇԱԼՖ, ա. շաֆք, արշալուսային շողարձակում:

ՇԱՅԷՆ, պ. շահիյն, բազէ. շահէն աչեր, բազէի աչքերու պէս սուր աչքեր:

ՇԱՂԱՎԱԹ, մ. հ., շաղ վաթել, թափել, որ ջարի վերէս շաղավաթ, որ վրաս շաղ չիոսեցուցիր: Ա. բ., շաղավաթ անել, պատուասիրել, պտուղ կամ այլ ուտելիք ընծայելով մեծարել (տես Ճանիկեան):

ՇԱՄԱԹԱ, ա., աղմուկ, իրարանցում:

ՇԱՄԱՄ, տ. շէմամէ, փոքր սեխ, բոլորշի, խատուտիկ ու անուշահոտ:

ՇԱՊԱՇ, պ., ուրա՛խ եղիր:

ՇԱՌ, ա. շաբ, չարիք, չարութիւն:

ՇԱՌԱՓ, մ. հ., մրրիկէն ուռիլ, ցնցուիլ, որոտալ: Յնցգուն եմ ի քո սիրուն զինչ ամպերըն կ'առնեն շառափ: Ա. բ., շառափ, տեղատարափ անձրեւ, հեղեղի պէս (տես Ճանիկեան):

ՇԱՌԻԵՂ, մ. հ., շառաւիղ. ճաճանչ:

ՇԱՐ, մ. հ., Ա. բ., պ. շար, սնդուս զոր կանայք իրենց գլխուն վրայ կը դնել, որով եւ իրենց զգեստ կը շինեն. շղարշ, cr**U**pe, թ. պիւրիւնճիւք, gaze: Շարէ շապիկ, շարէ շմաթ, շարեղէն:

ՇԱՐԱՇԱՐ, պ. սէրասէր, կերպաս որ ոսկեթելով գործուած է, եւ ոսկեթելով մը որ ծայէ ծայր նմանօրինակ է եւ հաւասար:

ՇԱՐՊԱԹ, ա. օշարակ:

ՇԷՅՐ, ա. շէհրի, vermicelle:

ՇԷՐՊԷԹ, տես ՇԱՐՊԱԹ:

ՇԷԻՔԷԹ, ա., պերճութիւն, շքեղութիւն, փայլ: Երեսին շէւքէթն եմ մոռցեր:

ՇԷՔԷՐ, ա. սուքար, շաքար:

ՇԷՔՐ, տես ՇԷՔԷՐ:

ՇԷՓԹԱԼՈՒ, պ., դեղձ:

ՇԸԼԼԻ, Ա. բ., տես ՇԼԻՆՔ:

ՇԸՄԱԹ, մ. հ., լանջակ (corsage)? կամ fichu, ճիտկապ կամ պարանոցի թաշկինակ ? հնցկուն իմ եարին ծըծերն ի ծոցին ներք& շըմաթին:

ՇԻՄԱԹ, տես ՇԸՄԱԹ:

ՇԻՇԱ. պ. շիյշէ, շիշէ: